

Գիտություն

ՀՈՒՆԻՍ

№ 3

(197)

2007 թ.

Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



ԻՍԿԻՆԶ ԳԱՏԵՆ ԲՅՈՒՐԱԿԱՆՅՈՒՆԵՐԸ

Հսկայական հզորության տայթյուն սինթեզում

21-րդ դարը մեծ հայտնագործությունների ժամանակաշրջան է լինելու: Չինացիները պատրաստվում են մշտական բնական կառուցել Լուսնի վրա, ամերիկացիներն ու ռուսները առանձնապես սիրով չեն բացում իրենց գաղտնիքները, հավանական է՝ պատրաստվելով գիտական ցնցող հայտնագործությունների: Իսկ առայժմ նրանք ուսումնասիրում են միջմոլորակային տարածքները և այդ ուսումնասիրությունների թիրախն են դարձել բազմաթիվ աստերոիդները, որոնք այցելելով հեռավոր գալակտիկաներից, մեզ են «տրամադրում» հսկա քանակությամբ ինֆորմացիա այլ մոլորակների, երկնային մարմինների նյութի կառուցվածքի մասին:

Երբ պատրաստվում էր թերթի սույն համարը, համաշխարհային լրատվական միջոցները նոր սենսացիա հրամցրին ընթերցողներին. մեր մոլորակից 150 հազար լույսային տարի հեռավորության վրա պայթել է գերհզոր մի աստղ, որը 150 անգամ մեծ է Արեգակից: Ի՞նչ անակնկալ կմատուցի մեր Երկրին այդ երևույթը, թող գիտնականները պարզեն: Հավանական է, մեր Բյուրականում կգտնվեն գիտնականներ, ում հետաքրքրում է այդ երևույթները և ովքեր հարկ կհամարեն իրենց կարծիքը կիսել «Գի-

տություն» թերթի ընթերցողների հետ:

Դե ինչ, այդ գերհզոր պայթյունը գուցե խախտի Բյուրականի գիտնականների հարաբերական (գուցե՝ բացարձակ) հանգստի վիճակը: 21-րդ դարը մեկ անգամ չէ, որ մեր թերթում հանդես գալու առաջարկներին պատասխանել են, որ իրենց չեն զբաղվում Արեգակնային համակարգի մարմիններով, որ իրենց թեման հեռավոր գալակտիկաներն են: Շնորհավորում ենք մեր աստղագետներին, չէ՞ որ նշված պայթյունը տեղի է ունեցել Արեգակնային համակարգից շատ հեռու տարածքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ՝ 70 ՏԱՐԵԿԱՆ

Հայաստանի 70-ամյա պետական ակադեմիական երգչախմբի ոսկեդարն սկսվեց մանուկ Նուրիկայի օրոք և շարունակվում է մինչ օրս: 46-րդ տարին է արդեն, որ համաշխարհային ասպարեզում կապելան փայլում է մանուկների գեղարվեստական ղեկավարությամբ: Հոբելյանական տարվա առթիվ կառավարական մի շարք միջոցառումներ են նախատեսված:

Գիտությունների ազգային ակադեմիայում, նաև ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ, հրավիրվել էր գիտաժողով՝ նվիրված երգչախմբի գործունեությանը: ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը մանուկներին հանձնեց ակադեմիայի բարձրագույն պարզը՝ ոսկե մեդալ: Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանը, իր հերթին Հ. Չերիշյանին հանձնեց նախարարության ոսկե մեդալը, նկատեց. «Յուրաքանչյուր ժողովուրդ չէ, որ կարող է կապել ինչ-որ ունենալ»:

Գրողների միության անունից շնորհավորելով երգչախմբին՝ ՀԳՄ քարտուղար Դավիթ Մուրադյանը նշեց, որ արվեստի յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր ճարտարապետները և այս շրջանի ճարտարապետներից մեկն էլ մանուկ Չերիշյանն է:

Չերիշյանը ներկայացրեցին ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն Աննա Ասատրյանը, Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ Դավիթ Ղազարյանը, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուսկյանը:

26 լեզուներով կատարելով 700-ից ավելի նոր ստեղծագործություններ՝ երգչախումբն ունեցել է 813 համերգ հանրապետությունից դուրս, հարյու-



րավորները՝ ԽՍՀՄ տարածքում:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գուրգեն Մելիքյանը եղել է մանուկների համալսարանական սաներից. «Դուք երգեցիք եր մեզ, երգչախմբին տվել եք ուժ, համարձակություն: Երբ եղանի հուշահամալիրի առջև երգում էինք, մենք գինվորներ էինք»:

«Մեր գեները մեր երգն է,՝ ասում է մանուկը,՝ երգչախումբը երջանիկ է, երգչախմբի հետ ես էլ եմ երջանիկ»:

Փակվում է մի ծրագիր, բացվում են նորերը

INTAS-ը դադարեցնում է իր գործունեությունը: Նախատեսվում է ավարտել բոլոր ընթացիկ ծրագրերը մինչև 2009 թ. և այլևս նոր ծրագրերի մրցույթ չի հայտարարվելու:

Այս մասին հայտարարվեց վերջերս Թբիլիսիում կայացած Հարավային Կովկաս և INTAS գիտահետազոտական նախագծերի համատեղ ֆինանսավորման մրցույթի արդյունքներին նվիրված սեմինարի ժամանակ: Սույն մրցույթի շրջանակներում Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունները մասնակցում են 9 ֆինանսավորված նախագծերում՝ մոտ 450.000 եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ:

Թբիլիսիում կայացած սեմինարին ներկայացվեցին նաև մի շարք այլ եվրոպական ծրագրեր, որոնց կարող են դիմել գիտական կենտրոններն ու ինստիտուտները, ԱՊՀ գիտնականները, այդ թվում նաև՝ երիտասարդ գիտնականները: Վերոհիշյալ ծրագրերից է FP7-ը՝ եվրոպական միության գիտական և տեխնոլոգիական զարգացման 7-րդ շրջանակային ծրագիրը, որի շրջանակներում հայ գիտնականները, գիտական կենտրոնները կարող են համատեղ նախագծերին մասնակցել նախանշված 10 գերակա ուղղությունների գծով, ինչպես օրինակ՝ առողջապահություն, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, կենսատեխնոլոգիա, նանոտեխնոլոգիա, հասարակական գիտություններ, բնապահպանություն և այլն: 2007-2013 թթ. ընթացքում FP7-ի ընդհանուր բյուջեն կկազմի ավելի քան 50 միլիոն եվրո:

Վերոհիշյալ ծրագրերի վերաբերյալ հայ գիտնականները առավել մանրամասն տեղեկատվություն կարող են ստանալ FP7-ի տեղեկատվական գրասենյակից (Մ. Բադրամյան 24 դ, 7-րդ հարկ) կամ այցելելով www.ec.europa.eu/research/fp7/ կամ <http://nlp.sci.am> էլեկտրոնային կայքերը:



Մեր հարևան Թուրքիան

Ս.թ. մայիսի 17-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ կտր սեղան՝ «Թուրքիան ընտրությունների նախաշնչին, իսլամականության և աշխարհիկության պայքարը» խորագրով՝ նվիրված Թուրքիայի ներքաղաքական ճգնաժամին և նախընտրական գործընթացներին: Այդ գործընթացները բնութագրվում են իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության ու աշխարհիկ կարգերի աջակիցների միջև ընթացող պայքարի սրացմամբ և քեմալիզմի խորացող ճգնաժամով, ինչը հարցադրում է իսլամականության և իսլամիզմի հարցերի մասին:

Քննարկման ընթացքում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատողներ պ. գ. ք. Անուշ Հովհաննիսյանը, պ. գ. ք. Արտակ Շաքարյանը, Արթուր Դումանյանը և Տաթևիկ Մամուկյանը ներկայացրին իրենց դիտարկումները վերջին շրջանի քաղաքական գործընթացների և սպասվելիք նախագահական ու խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ: Ա. Հովհաննիսյանը մասնավորապես ներկայացրեց Թուրքիայում իսլամական կապիտալի աճող ազդեցության, Ա. Շաքարյանը՝

ազգայնական շարժումների աճի, Ա. Դումանյանը՝ բանակ-քաղաքականություն կապի, իսկ Ս. Մամուկյանը՝ քրդական գործունի մասին: Հիմնական բանախոսը՝ Թուրքիայի բաժնի գիտաշխատող, պ. գ. ք. Վահրամ Տեր-Մարտիրոսյանը, ներկայացրեց առավել համազանգված վերլուծություններ մերօրյա քաղաքական ճգնաժամի, իշխող քաղաքական ուժի գաղափարախոսական հիմնադրույթների ու սպասվելիք զարգացումների վերաբերյալ: Ելույթներին հետևեց հարց ու պատասխան:

Բացման խոսքով հանդես եկավ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Թուրքիայի բաժնի վարիչ Ռուբեն Մաֆրեսյանը: Նա նախ ողջունեց հյուրերին և տեղեկացրեց, որ օրվա թեման Թուրքիայի բաժնում պարբերաբար տեղի ունեցող կտր սեղաններից մեկն է, և հաշվի առնելով խնդրի արդիականությունը որոշում է կայացվել կտր սեղանին հաղորդել ընդլայնված բնույթ՝ հրավիրելով հյուրեր տարբեր գիտահետազոտական ինստիտուտներից, ինչպես նաև՝ ՀՀ-ների ներկայացուցիչներ:

Shu' ամս 3-րդ էջ

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մայիսի 23-ին կայացած նիստում ՀՀ ԳԱԱ Նախագահությունը հանձնարեց ակադեմիայի և հանրադատության գիտական կյանքին

վերաբերող հարցեր: 33 ԳԱԱ Նախագահությունը նշեց, որ համաձայն ԵԱ-Հայաստան գիտական համագործակցության Միջազգային շաղկապի 3.2 պարագրաֆի, FP6 և FP7 եվրոպական շրջանակային ծրագրերի դրամաշնորհներում ներգրավված գիտական խմբերը պետք է ազատվեն ամեն տեսակի հարկումներից: Ահա ինչու 33 ԳԱԱ Նախագահությունը դիմում է համապատասխան մարմիններին, առաջարկելով՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ, ՈՐՈՒՔ ԵԱՀԵԼ ԵՆ FP6 ԾՐԱԳՐԻ ԵՐԱՇԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԵՐ, ԱՀԱՍԵԼ ՀԱՐԿԵՐԻՅ ԵՎ ՄԱՐԱԿԱՎԱՐՆԵՐԻՅ:

33 ԳԱԱ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի գերակայությունների վերաբերյալ

1. Հիմնարար գիտություններ, որոնք խթանում են կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունները:
2. Հայագիտություն, սոցիալ-տնտեսագիտական գիտություններ:
3. Տեղեկատվական և առաջատար տեխնոլոգիաներ
4. Երկրի և տիեզերքի ուսումնասիրություններ:
5. Նոր նյութեր:
6. Էներգիայի նոր աղբյուրներ:
7. Կայուն զարգացման կենսաբանական և էկոլոգիական ասպեկտներ:

ՀԱՅՏՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ ՎՈԼՖԳԱՆԳ ԼՈՒԻՆ ԵՆՈՐՀՎԵՅ ՀՀ ԳԱԱ ՊԱՏՎԱԿՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ

Մայիսի 23-ին կայացած նիստում ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշում ընդունեց ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում շնորհել հանրահայտ մաթեմատիկոս, Տփլիսի համալսարանի (Գերմանիա) պրոֆեսոր Վոլֆգանգ Լուինին:

Պրոֆեսոր Վոլֆգանգ Լուին ակտիվորեն նախաձեռնել և մասնակցել է Հայաստանի և Գերմանիայի մաթեմատիկոսների միջև համագործակցության ամրապնդմանը, այդ թվում մեծ աշխատանք է տարել բազմաթիվ գիտաժողովների, սեմինարների, գիտական ներքին փոխանակման և այլ ծրագրերի իրականացման ասպարեզում:

33 ԳԱԱ Լրատվական ծառայություն

Գիտություն

թերթը իր և բոլոր
ընթերցողների
անունից

շնորհավորում է
հանրապետության
միջնակարգ
դպրոցների 50
հազար

շրջանավարտ-
ներին և մաղթում
նրանց կանաչ ճանապարհ
կյանքի դժվար, բայց հաճելի
արահետներում:



յալ ինստիտուտ-Հայաստան համագործակցության լիազոր ներկայացուցիչ առաքելությունը:

- Համալսարանի և Հայաստանի միջև գիտության տաղանդավոր կազմակերպիչ է: Նրա ջանքերով ձևավորվեց և կայացավ Երևանի պետական համալսարանի միջուկային ֆիզիկայի ամբիոնը և «Միջուկային էներգետիկա» մասնագիտությունը:

Ավարտելով խոսքը, ԳԱԱ պրեզիդենտ Ռ. Մարտիրոսյանը ասաց.

- Հնորհավորելով Ձեր հոբելյանը, ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ, Ձեր արածի, հայրենական գիտությանը մատուցած այն մեծ ծառայությունների համար, որոնք ծանաչում, հարգանք և հեղինակություն են բերել Հայաստանյան գիտությանը:

Այնուհետև Ռ. Մարտիրոսյանը հոբելյարին հանձնեց ԳԱԱ Նախագահության ողջույնի ուղերձը:

Հռչակավոր գիտնականի կյանքի անցած ուղու, գիտական գործունեության շրջանների և արժեքավոր նվաճումների մասին ընդարձակ հաղորդում ներկայացրեց ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Սիմոնյանը: Չմոռացվեցին նաև այն կարծիքներն ու բարձր գնահատականները, որոնք տրվել են Համալսարանի և Հայաստանի աշխարհի նշանավոր ֆիզիկոսների կողմից:

Հոբելյարին հղված ուղերձներում, ելույթ ունեցողների շնորհավորանքի խոսքերում առանձին վրձնահարվածներով ամբողջացավ հռչակավոր գիտնականի, նկարագրով իսկական հայի և մեծ հայրենասերի, գիտությանը անմնացորդ նվիրված գիտնական-փորձարարի, ազնիվ և հիմնալի մարդու դիմանկարը:

Հայկական գիտությունը պետք է լինի և զարգանա՝ ահա հոբելյարի հավատամքը: Եվ նա ու միայն ծառայել է այդ գաղափարին, այլև կռվել ու պայքարել հայ գիտության զարգացման արգելակող բոլոր խոչընդոտների դեմ:

Մեծարժան հավաքույթն ավարտվեց Համալսարանի և Հայաստանի շնորհակալական ջերմ խոսքով:

ՄԵԾԱՐՈՒՄ

Համալսարանի և Հայաստանի միջև – 80

33 ԳԱԱ Նախագահության հերթական նիստը ըստ էության տոնական հավաքույթ էր՝ նվիրված հռչակավոր գիտնական, ակադեմիկոս Համալսարանի և Հայաստանի միջև 80-ամյակին:

Բացելով նիստը 33 ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ջերմորեն շնորհավորեց մեծանուն ֆիզիկոսի գեղեցիկ հոբելյանը, մաղթեց բազմաթիվ առողջություն և նորանոր ստեղծագործական հաջողություններ:

- 1958 թվականին գալով Հայաստան, ասաց Ռ. Մարտիրոսյանը. երիտասարդ ֆիզիկոս Համալսարանի և Հայաստանի միջև գերազանց փորձարարական ֆիզիկայի ամենաբարձր բնագավառով և ժամանակի ընթացքում հասավ փայլուն հաջողությունների: Եվ եթե այսօր հայկական ֆիզիկայի դպրոցը բարձր համարում ունի աշխարհում, դրանում անուրանալի է նաև Համալսարանի և Հայաստանի վաստակը:

Համալսարանի և Հայաստանի միջև իր գիտական և աշակերտների հետ կարողացավ կյանքի կոչել հայկական արագացուցիչի բոլոր հնարավորությունները, իրականացրեց և ստացավ փորձարարական ֆիզիկայի հետազոտությունների այնպիսի արդյունքներ, որոնք ծանաչում գտան ամբողջ աշխարհում:

3. Վարդապետյանը ստեղծեց իր դպրոցը, նրա գիտական բեղմնավոր գործունեությունը մեծ նշանակություն է ունեցել և ունի Հայաստանում բարձր էներգիայի ֆիզիկայի կայացման ու զարգացման գործում: Արգասավոր է նաև Համալսարանի և Հայաստանի միջև գործունեությունը Դուբնայի միջուկային ֆիզիկայի միաց-

ՍԵՄԻՆԱՐ 33 ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

2007թ. մայիսի 30-31-ը ՀՀ ԳԱԱ-ում գործող Եվրոպական Միության գիտական հետազոտությունների և տեխնոլոգիական զարգացման յոթերորդ շրջանակային ծրագրի /7ԾԾ/ Տեղեկատվական կենտրոնը և ԵՊՀ ՍՏՏՏ-ի որակի լաբորատորիան համատեղ կազմակերպել էին սեմինար 7ԾԾ-ի «Մեղմամբերը, կենսատեխնոլոգիա, գյուղատնտեսություն և ձկնաբանություն» թեմատիկ ուղղությամբ վերաբերյալ: Սեմինարի նպատակն էր վերոնշյալ բնագավառները ներկայացնող Հայաստանի գիտահետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներին և գիտական լայն հանրությանը ներկայացնել ընդհանուր տեղեկատվություն 7ԾԾ-ի և «Մեղմամբերը, կենսատեխնոլոգիա, գյուղատնտեսություն և ձկնաբանություն» թեմատիկ բնագավառներում համատեղ գիտահետազոտական նախագծերում մասնակցության հնարավորությունների վերաբերյալ:

Տեղեկատվական սեմինարը կազմակերպվել էր 6ԾԾ-ի շրջանակներում հավանության արժանացած InJoy&Train նախագծի շրջանակներում, որին մասնակցում է նաև ԵՊՀ ՍՏՏՏ-ի որակի լաբորատորիան: Նախագծում ընդգրկված են

նաև կազմակերպություններ Խուլիայից, Նիդերլանդներից, Հունաստանից, Հունգարիայից, Վադախստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից:

InJoy&Train-ը 2 տարի տևողությամբ նախագիծ է, որի հիմնական նպատակն է որակապես և քանակապես բարելավել մասնակից ԱՊՀ երկրների գիտնականների և փոքր ու միջին ձեռնարկությունների /ՓՄՉ/ մասնակցությունը 7ԾԾ-ի «Մեղմամբերը, կենսատեխնոլոգիա, գյուղատնտեսություն և ձկնաբանություն» բնագավառներում համատեղ գիտահետազոտական նախագծերի արդեն հայտարարված և ապագա բաց մրցույթներին:

Տվյալ տեղեկատվական սեմինարը այդ նպատակին հասնելու միջոցառումներից մեկն էր, որոնք նախատեսվում են նաև 7ԾԾ-ի մասին հակիրճ ուղեցույցի հրատարակում և տարածում, ԱՊՀ երկրների «Մեղմամբերը, կենսատեխնոլոգիա, գյուղատնտեսություն և ձկնաբանություն» բնագավառների գիտահետազոտական ինստիտուտների ու ՓՄՉ-ների գրացուցակի /կատալոգ/ տեղադրում, նախագծի ինտերնետային կայքի միջոցով հա-

մատեղ նախագծերի համար արտասահմանյան գործընկերների փնտրման օժանդակում և հրատապ գիտական թեմաների շուրջ վիրտուալ բնագավառների կազմակերպում: Հարկ է նշել, որ տվյալ զարգացումները տեղ գտած 170 ԱՊՀ կազմակերպություններից 32 ներկայացնում են Հայաստանը:

Սեմինարի ընթացքում ներկայացվեցին գեկուցումներ 7ԾԾ-ի ընդհանուր դրույթների և ԱՊՀ երկրների մասնակցության հնարավորությունների, «Մեղմամբերը, կենսատեխնոլոգիա, գյուղատնտեսություն և ձկնաբանություն» ուղղություններում հայտարարված և ապագա մրցույթների, 7ԾԾ-ում միջազգային համագործակցության, եվրոպական գործընկերների փնտրելու ու համատեղ նախագծերում ընդգրկվելու հետ առնչվող այլ անհրաժեշտ հմտությունների վերաբերյալ:

Ձեկուցողները պատասխանեցին հայ մասնակիցների բազմաթիվ հարցերին ինչը Շրջանակային Ծրագրերի նկատմամբ հայ գիտական հանրության հետաքրքրվածության հավաստումն էր:

ԵՄ 7ԾԾ Տեղեկատվական կենտրոն

Ջահուկյանական ընթերցումներ

Մայիսի 34-ը ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ ԶԱՆՈՒԿ-ՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐԳՈՒՄՆԵՐ հանրապետական գիտական նստաշրջանը: Սա թվով երկրորդ գիտաժողովն էր՝ նվիրված մեծանուն գիտնականին: Գիտաժողովին այս անգամ առաջին անգամ, բացի լեզվի ինստիտուտի և Երևանի Պետական համալսարանի գիտնականներից, իրենց մասնակցությունը էին բերել նաև Կոնստանդնուպոլիսի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտնականները:

33 ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Լավրենտի Դովհաննիսյանը կարևորում է հատկապես այն փաստը, որ այս գիտաժողովին լեզվաբանական գրեթե բոլոր ուղղությունները ներկայացված էին՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանություն, լեզվի պատմություն, բարբառագիտություն և ժամանակակից հայոց լեզու: Այսպես՝ բանասիրական գիտ. թեկնածու Բարսեղյան Ամալյայի ղեկավարությամբ վերաբերում էր շարահյուսական կապակցությունների (մասնավորապես՝ համաձայնությանը և առդրությանը) սխալ կիրառություններին արդի հայ մանուկում, իսկ բանասիրական գիտ. թեկնածու Ա. Ղաբեկյան Մելադայի ղեկավարությամբ՝ հայերենի ընդհանրապես բաղաձայնների գոյության խնդրին: 33 ԳԱԱ թղթակից անդամ Արտեմ Սարգսյանի ղեկավարությամբ վերաբերում էր հայերենի մի քանի գունամանրաների ստուգաբանության հարցին, տեխնիկական գիտությունների թեկնածու Ռոբերտ Ուռուտյանի ղեկավարությամբ՝ լեզվի ձևային նկարագրության բնութագրում, բանասիրական գիտ. թեկնածու Գալստյան Անահիտի ղեկավարությամբ՝ մանկական խոսքի ուսումնասիրության մի քանի հարցերի: Բանասիրական գիտությունների դոկտոր Լավրենտի Դովհաննիսյանը ներկայացրեց գրաբարում երաժշտության իմաստալից խմբի բառերի առկայության վերաբերյալ գեկուցում, բանասիրական գիտ. թեկնածու Դավաթյան Տորգի ղեկավարությամբ վերաբերում էր հայ-օսական մի քանի գուգաբանությունների բնութագրում, բանասիրական գիտ. թեկնածու Սիմոնյան Նեկտարը ներկայացրեց «Բանականական հոմանշությունները հիմնականում բայական համակարգում» գեկուցումը: Կոնստանդնուպոլիսից բանասիրական գիտ. թեկնածու Շադոյան Գոհարի ղեկավարությամբ վերնագրված էր՝ «Հայոց այբուբենի հավերժականության պատմությունը: Տերտերյանի 6-րդ սիմֆոնիայում»: Ի դեպ, պետք է նշել, որ ըստ հեղինակի, Տերտերյանի 6-րդ սիմֆոնիան միակն է աշխարհում, որի հիմքում ընկած է այբուբենը:

Գիտաժողովում ներկայացվեցին նաև գեկուցումներ, որոնք վերաբերում էին հայ բարբառներին, լեզվի պատմությանը, ժամանակակից քերականության մի քանի խնդիրներին: Ընդհանուր առմամբ ներկայացված գեկուցումները բաժանվեցին երեք խմբի: Նախատեսվում է նաև դրանց հրատարակությունը:

33 ԳԱԱ Լեզվի ինստիտուտի տնօրեն Լավրենտի Դովհաննիսյանը հատկապես կարևորում է այն փաստը, որ այսօրինակի գիտաժողովների կազմակերպումն արդեն ավանդույթ է դառնում: «Մեր պայմաններում գիտաժողով կազմակերպելը, ապա գեկուցումները հրատարակելն արդեն մեծ բան է: Լավ է նաև, որ ուրիշ բնագավառների մասնագետներ էլ էին մասնակցում: Եթե կարողանանք Ջահուկյանական ընթերցումներն ամենամյա դարձնել, բավարարված կլինենք»,- նշեց լեզվաբանը:

ՀՀ ԳԱԱ ԼԵՐԱՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

1. «Արդարություն և զարգացում» կուսակցության անցյալը գաղափարա-քաղաքական բնութագիրը

2002 թ.-ի նոյեմբերի 3-ին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Արդարություն և զարգացում» կուսակցությանը (հետագայում՝ ԱԶԿ) հաջողվեց գալ իշխանության շնորհիվ իր առաջարկած նոր բանաձևերի, նոր մոտեցումների: 2002 թ. ընտրությունների արդյունքների ա-

ռաջարկեց, իսկ ընդդիմությանն ու բանակին հնարավորություն տրվեց սեփական կարևորության մասին հիշատակել՝ հենվելով այդ հարցադրումների վրա:

ԱԶԿ-ի դավանած պահպանողական ժողովրդավարության գաղափարը, որի հիմքում, ըստ էության, դրված էր հասարակության հաշտեցման սկզբունքը, մնաց անկատար գերնախագիծ, քանզի հաշտեցում չէր կարող տեղի ունենալ հաշտեցմանը խոչընդոտող խնդիրների արհեստական ու միտումնավոր անտեսմամբ: ԱԶԿ-ն ձգտում էր ապակողովորել բուրքական պետության բնույթը և գաղափարական կառուցվածքը, սակայն սալաքարե այն-

հատակ տրամաբանություն և զարգացման բանաձև: Չեզ ներկայացնեմ միայն մեկ թիվ - 1999 թ.-ից 2000 թ. ընկած ժամանակահատվածում Թուրքիայում յուրաքանչյուր 6 ժամը մեկ շահագործման է հանձնվել մեկ մզկիթ:

2. Ներքաղաքական ճգնաժամի էությունը

2002 թ. նոյեմբերին 4-ին արդեն պարզ էր, որ նախագահական ընտրությունների հետ կապված որոշակի գործընթացներ էին սկսվելու, պարզ էր նաև էրդողանի մտադրությունը և նախագահական հավակնությունները, սակայն նրանք չկարողացան առաջարկել դեղատոմսեր:

Նախագահ կարող է ընտրվել պատգամավորների ընդհանուր թվի (550)-ի երկու-երրորդ մասով (367)», և եթե այս թիվը չի հաջողվում ապահովել առաջին երկու փուլերում, ապա համաձայն հողվածի երրորդ փուլում արդեն նախագահ կարող է ընտրվել 276 անդամներով:

Սակայն սահմանադրության 96 հոդվածը հստակորեն սահմանում է, որ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի ներկայությունը բավարար է ցանկացած նիստ գումարելու համար, այսինքն 184-ը բավարար թիվ է: Այս թիվն էլ հիմք ընդունելով հանդերձ, օրենքներն ընդունված են համարվում, եթե ստացել են 276 ձայն, իսկ Սահմանադրությունը կարող է փոխվել և նախագահ կարող է ընտրվել միայն 367 ձայնի առկայության դեպքում:

1982 թ. սահմանադրության ընդունումից հետո այս դեպքն առաջին անգամ է, որ ստացվում է ստորադրություն, քանզի նախորդ դեպքերում ես ոչ մի նախագահ չի ընտրվել 367 ձայնի առավելությամբ, այլ խոսքերով, գործը մշտապես հասել է երրորդ փուլ և ընտրություն կատարվել շատ ավելի քիչ, քան 367 ձայնը:

4. Նախընտրական գործընթացներ

ԱԶ-կենտրոնի և ձախ-կենտրոնի քաղաքական ուժերի կոնսոլիդացման գործընթաց, օրինակ 1980-90-ական թթ. Թուրքիայում ազդեցիկ քաղաքական դերակատարում ունեցած ԴՌԿ-ի և Մայր Հայրենիք կուսակցությունների միավորումը մեկ կուսակցության մեջ՝ Նոր դեմոկրատական կուսակցություն: Նույնատիպ գործընթացներ են տեղի ունենում ձախ կենտրոնում որտեղ ընդդիմադիր ԺՀԿ-ն միացավ նախկին վարչապետ Բյուլենք Էջևիթի դեկավարած Չախ դեմոկրատական կուսակցությունը:

Ապագա խորհրդարանում, կարծում ենք, ներկայացված կլինեն առնվազն չորս քաղաքական ուժեր, ԱԶԿ-ն, ԺՀԿ-ն, Դեմոկրատական կուսակցությունը և շատ հավանական է ազգայնական Ազգային շարժում կուսակցությունը:

ՎԵՐՋՈՒՄ

ԱԶԿ-ն ապացուցեց, որ կողմ է աշխարհիկ ուժերի հետ խաղաղ գոյակցությանը, նրանք ցույց տվեցին, որ գալով իշխանության, ունենալով անհրաժեշտ մեծամասնություն նրանք նպատակ չեն հետապնդում փոխել երկրի սահմանադրական կարգը: 2002 թ. ընտրաշաղկի ի վեր ԱԶԿ կատարեց առաջին քայլը և ուժ գտավ առաջինը վերափոխվել և հարմարվել այն խաղի կանոններին, որոնք հաճու էին քեմալականներին, և հինգ տարիների ընթացքում նրանք ակնդետ սպասում էին, թե քեմալականները հավանություն տալիս են նրանց առաջարկած «խաղաղ գոյակցության» բանաձևին: Այլ խոսքով, քեմալականներն իրենք չեն ցանկանում խաղալ սեփական կանոններով:

Նկատի ունենալով այս հանգամանքը, կարծում ենք, որ թուրքերը ԱԶԿ-ին կտան երկրորդ հնարավորությունը և վստահության թվեն գալիք ընտրություններում, և ԱԶԿ-ն կրկին կստանձնի իր կարևոր քաղաքական առաքելությունը:

Վահրամ

ՏԵՐ-ՄԱԹԵԼՈՍՅԱՆ

ԹՈՒՐԷԻՍ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ Իսլամականության և աշխարհիկության պայքարը



ռանձնահատկություններն այն էին, որ 17-ամյա ընդմիջումից հետո առաջին անգամ կազմավորվեց միակուսակցական կառավարություն և 1957 թ. հետո առաջին անգամ երկրի խորհրդարանում ներկայացված էին ընդամենը երկու քաղաքական ուժ: Հարկ է հավելել, որ ընտրություններում ցածր մասնակցության պատճառով 2002 թ. ընտրություններից հետո ընտրազանգվածի շուրջ 45 տոկոսը ներկայացված չէր խորհրդարանում, քանզի նույն ընտրություններում ցածր մասնակցության պատճառով ԱԶԿ ստանալով 34,3 տոկոս (10.700.400 քվե) կարողացավ ստեղծել միակուսակցական կառավարություն: Հետևաբար, տրամաբանական հարց է առաջանում. արդյո՞ք ամբողջ բուրք հասարակությունն էր հավանություն տալիս էրդողանի բարեփոխումներին:

Թուրքական քաղաքականությունը վեց տասնամյակից ավել ուղղորդվել է հակաստրությունների սկզբունքով, աշխարհիկներն ընդդեմ իսլամականների, աջերն ընդդեմ ձախերի, քրդերն ընդդեմ թուրքերի, Ստամբուլն ու Անկարան ընդդեմ Անատոլիայի, կենտրոնն ընդդեմ ծայրամասի, գլխաշորն ընդդեմ ժամանակակից հագուստի, Դուրանի դասընթացներն ընդդեմ հանրակրթական դպրոցների և այլն, այս շարքն անվերջ է: ԱԶԿ-ն 2002 թ. եկավ իշխանության, ցանկանալով որոշակիորեն շեղել հանրության ուշադրությունը այդ հինաձ կարծրատիպերի քաղաքական մշակույթից, առաջարկելով լուծել շատ ավելի կարևոր ու ռազմավարական երկարաժամկետ խնդիրներ, իրականացնել սոցիալական ոլորտի լրջագույն բարեփոխումներ, նոր ընթացք տալ ԵՄ ինտեգրման գործընթացին և հարկ է նշել, որ իշխանության առաջին 3 տարիների ընթացքում նրանց հաջողվեց ունենալ հստակ ձեռքբերումներ նշված ոլորտներում, ընդդիմությունը ըստ էության պարապտրոյի էր մատնված, քանզի ԱԶԿ-ի գրեթե բոլոր նախաձեռնությունները պսակվում էին հաջողությամբ, և ի վերջո միակ թույլ օղակը, որից կարողացան իշխանությունները կառչել, դա զգալուն գաղափարական հարցերն էին, որոնց առումով ԱԶԿ-ն ոչ մի լուրջ բանաձև չա-

տեղ, որտեղ ամենախոցելի էր: ԱԶԿ-ն առաջարկելով բուրքական ինքնության նոր բանաձև, անկարող եղավ ստեղծել սեփական գաղափարախոսության կարծրատիպը, նրա գաղափարական կողմնորոշումը մնաց անորոշ ու հստակության կարիք ունեցող, նրա իշխանության տարիներին շատ ավելի հարցեր ավելացան, քան տրվեցին պատասխաններ: ԱԶԿ-ն ամեն կերպ ջանացել է հեռու մնալ պիտակավորումներից, էրդողանը բազմիցս նշել էր, որ իր կուսակցությունը «սոցիալ պահպանողական» է, իսկ մեր հայրենակից էքյեն Մահմուդյանը և մեկ այլ բուրքագետ Ամնեթ Թաներ Կըլալին առաջարկում էին առավել պատշաճ գաղափարական շրջանակ, այն է՝ «մահմեդական դեմոկրատիա»:

ԱԶԿ-ն հանրային կերպարը մշտապես ներկայացվել է աշխարհականների լույսի ներքո, այսինքն, նրա իրական բնութագիրը տակավին մնում է անորոշ: 2003-04 թթ. Թուրքիայում կարելի է տեսնել հինգհարկան բազմաբնակարան շենքի բարձրության պատկերներ, որտեղ կողք կողքի պատկերված էին Աբաբյուրքի և էրդողանի նկարները: Այսինքն, հասարակական գիտակցության մեջ փորձ էր արվում էրդողանի ներկայացնել, որպես յուրային, որպես Աբաբյուրքի ժամանակաշրջանի և ապագայի միջև կամուրջ: Սակայն, բուրքական հասարակությունը, որտեղ Պիեթ Բորդոյի բնութագրմամբ, մշտապես առկա է եղել «խորհրդանշների բռնություն», անկարող եղավ մարտել այս մեկնաբանությունը: Վերիշխանական շրջանակներում ԱԶԿ-ի անդամները երբեք չընկալվեցին որպես յուրայիններ, նրանք, Հական Յավուզի բնութագրմամբ ընկալվեցին, որպես «սև բուրքեր», որոնք հանդգնություն են ունեցել կանգնել պետական մեքենայի դեմ:

Էրդողանի կուսակցությունը վայելում է մեծ թվով աջակիցների վստահությունը, և թեև նա ներկայանում է իսլամականությունից հնարավորինս հեռու դիրքերից, այնուամենայնիվ նրա իշխանության տարիներին իսլամականությունը դարձավ երկրի ներքին կարգավորման, կոնսոլիդացման լրջագույն դիմամիզմ, այն ունեթ

Քեմալականները թեև պնդում են, որ նրանք երկար ժամանակ սպասում էին համապետական ընտրություններին, սակայն այս պահին նրանք հավիտ պատշաճի նախապատրաստության կարիք ունեն: Իրականում, թե երկրորդ և թե ներկա երրորդ հանրապետությունների գոյության տարիներին, նման վաղաժամկետ ընտրությունների օրվա անակնկալ հայտարարությունը լայնորեն ընդունված և գրեթե միշտ իրեն արդարացրած հնարք է եղել:

ԱԶԿ-ում քննարկվում էին մի քանի հնարավոր քեմալություններ, էրդողանի, Գյուլի և Արիֆի կողքին քննարկվում էին, պաշտպանության նախարար Վեդի Գյոնուլի, պետության նախարար Մեհմեթ Ալթընի և Բեշիր Աթալայի անունները, առավել դիտարժան էին կուսակցության երկու կին անդամների՝ պետականաբար Նիմեթ Չուբուքչուի և կուսակցության գաղափարական ղեկավարներից մեկի՝ Էդիպե Մյուզունի քեմալությունը: Ուշագրավ է, որ որոշ մեկնաբաններ տղամարդ քեմալությունների քննարկման ժամանակ կարևորացրել չափանիշ էին համարում նրանց կանանց գլխաշոր կրելու հանգամանքը: Քննարկվեց նաև Սահմանադրական դատարանի կին նախագահի Թյուլայ Թուրքույի քեմալությունը: Սակայն ինչպես գիտենք ընտրությունը կանգ առավ 56-ամյա արտգործնախարար Գյուլի վրա:

3. 367 -ի հիմնահարցը

Ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (հետագայում՝ ԺՀԿ) պնդում էր, որ առաջին փուլի առաջին նիստը գումարելու համար հարկավոր է ներկա գտնվեն 367 պատգամավոր, որը կապահովի բոլորում և օրինական հիմք կստեղծվի ընտրությունների առաջին փուլն անցկացնելու համար:

Հենց այդ 367-ը դարձավ իրական խնդիր և ըստ էության դարձավ այն հիմնական պատճառը, որը քաղաքական ուժերին դրոշմ նոր ընտրությունների: Ի՞նչ է ասում օրենքն այդ մասին:


Սահմանադրության նախագահի ընտրությանն առնչվող հատվածում նշված է, «Երկրի

Նորից երկրաշարժ, նորից տորնադո, նորից ցունամի...

Խաղաղ և Դնդկական օվկիանոսները հանգիստ չեն տալիս իրենց ափամերձ բնակիչներին: Ինդոնեզիան, Մալագիան, Սինգապուրը ահա քանիերորդ անգամ ցնցվում են ուժեղ երկրաշարժերից: Դինգ, վեց, նույնիսկ՝ յոթ բալանոց ցնցումները դարձել են սովորական: Ու ասես իրենց ավերիչ հետևանքները բողբոջելու համար, ցնցումներին հաջորդում են երկու օվկիանոսների քնած ցունամիները, որոնք սրբում, տանում են ավերածությունների հետքերը՝ թողնելով տխուր ամայություններ:

Չնայած գիտնականների կանխագուշակումներին, դեռ ոչ ոք չի կարողացել ասել, թե հաջորդ ահավոր ցնցումը որտեղ է երբ պետք է լինի: Այս լուսանկարում դուր տեսնում եք նախկին Թովափյան բարետես բնակավայրը, որից ոչինչ չի մնացել: Այժմ էլ լրատվական գործակալությունները հաղորդում են նոր ցնցումների ու նոր ավերածությունների մասին: Կարողանա, արդյոք, մարդկությունը եթե ոչ կանխել, գոնե կանխագուշակել և նվազագույնի հասցնել բնության տարերքի վնասները: Ի՞նչ կասեն գիտնականները կայացած ցնցումների մասին վերլուծականներից բացի: Իսկ գուցե մինչև այդ կարծիքների սպասելը այսօր արդեն քաղաքները, շենքերն ու թաղամասերը կառուցվեն առավել կայուն, ցնցումների հավանականությունից զերծ սեյսմակայուն գոտիներում: Ամերիկյան, Ճապոնական քաղաքներում իրար վրա կուտակված երկնաքերները մարդու վստահությունը չեն վայելում: Իսկ մեր երևանյան նոր բազմահարկերը ծլարձակվում են ամենուր՝ առանց հաշվի առնելու հիմքի ամրությունն ու տեղանքը:

Եթե պատրաստվում էր թերթի այս համարը, տեղեկացանք, որ կլիմայի տրամադրի ունեցող տորնադոն կուլ է տվել ամերիկյան մայրցամաքի արևելյան զանգվածները, ավերել քաղաքներ...



Նրանք աշխարհին բացահայտում, ներկայացնում էին հայի փառանքով ստեղծված հուշարձանները



Անի – 1907 թ.- Թանգարանի մուտքի մոտ. առաջին շարքում (կանգնածներ) Թորոս Թորամանյան, Յովսեփ Օրբելի, Աշխարհբեկ Քալանթար, Արամ, Կարապետ, Օհան: Երկրորդ շարքում՝ Ն. Մառ, Պոլտորացկի, Միքայել վարդապետ, Նուսեն, Վրույր, Ա. Ա. Ժուկովսկայա-Մառ: Երրորդ շարքում՝ Կոլյա, Արա, Վրույր, Յուրի Մառ, Արտաշես, Վրույր:



Անի – 1912 թ.- Վերին շարքում աջից Թորոս Թորամանյան, բանաստեղծ Խաչիկ Խան Սարաջյան, Միքայել վարդապետ և կարսեցի ուսուցիչներ:



Անի – Թանգարանի մուտքի մոտ: Աջից ծախ՝ Թ. Թորամանյան, Արամ Վրույրի կինը՝ Նուսեն, Վրույր, Անիի վանահայր Միքայել վարդապետ:



Արգիի առողջարանում՝ 1931 թ.: Աջից ծախ՝ Թ. Թորամանյան, Խիզանյան: Վերջինը՝ Թամանյանի կինը: Իլ շարք՝ Ավ. Իսահանյան, Մ. Սարյան և ուրիշներ:



Ընտանեկան միջավայրում. Թ. Թորամանյանը և Ավ. Թամանյանը

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(Ազգային միասնության ուխտ)

1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հատվածը հայոց ցեղասպանությունը և հայ ժողովրդի հայրենասիրությունը միջազգայնորեն հաստատող այսօրվա ուժը պահպանած իրավաբանական միջազգային փաստաթուղթ է: ԱՄՆ-ի այն ժամանակվա նախագահ Վուդրո Վիլսոնի տնօրինությամբ գծված քարտեզում նշված է Հայաստանի Հանրապետության տարածքները սահմանագծող ու ամրագրող, Թուրքիայից Հայաստանի Հանրապետությանը վերադարձվելիք հայոց տարածքների չափը (40 հազար քառ. մղոն, 90 հազար քառ. կմ): Հայաստանի Հանրապետության այդ քարտեզը աշխարհի 10-ից ավելի տերությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սերբիա-Հորվաթիա-Սլովենիա, Չեխոսլովակիա, Թուրքիա) ստորագրությամբ Հայաստանի Հանրապետության պետական սահմանները հաստատող և հայոց ցեղասպանությունը դատապարտող միջազգային իրավագոր պահանջ է Թուրքիայից: Ընդ որում՝ դաշնագիրը ստորագրած տերությունների որոշումով այդ վճիռը անվերապահորեն իրագործելի էր ստորագրման պահից, իրավաբանորեն բեկանման ենթակա չէր և ստորագրող երկրների խորհրդարանների հաստատման անհրաժեշտությունը չուներ: Այսինքն՝ իրավական գործությունը այսօր պահպանած Սևրի միջազգային պայմանագիրը գործադրելի է այնքան ժամանակ, քանի դեռ այն ստորագրած տերությունները պաշտոնապես չեն վերանայել իրենց դիրքորոշումը: Սակայն 1921 թ. մարտի 16-ին առանց Հայաստանի մասնակցության Մոսկվայում կայացած ռուս-թուրքական միջազգային իրավունքի առումով բացարձակապես անիրավագոր դաշնագիրը, Նախիջևանի երկրամասը Հայաստանից բռնազատեց՝ հանձնեց Խորհրդային Ադրբեջանի «հովանավորությանը», իսկ Կարսը, Արդահանը, Իգդիրը և այլ տարածքները հանձնեց Թուրքիային: Դաշնագիրը ստորագրման պահից անիրավագոր ու ապօրինի է, քանի որ ստորագրող պետությունները՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը և Թուրքիայի Ազգային մեծ ժողովը, 1921 թ. մարտի 16-ին «միջազգային իրավունքի սուբյեկտ» չէին, միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն չուներին, քանի որ աշխարհի ոչ մի պետությունից պաշտոնապես ԱՅԴ ԱՆՈՒՆԵՐՈՎ չէին ճանաչված: Դիվանագիտության պատմության մեջ այդ աննախադեպ բռնությունը ըստ էության Թուրքիայի կազմակերպած և իրականացրած Հայոց Մեծ եղեռնը վերջնական նպատակին հասցնելու, այն է՝ արևելահայությանը ևս ոչնչացնելու, Արևելահայաստանը նույնպես հայաթափելու, Հայաստանը մեջտեղից վերացնելու ծրագրի գործադրությունն էր: Հայակոթած այդ գործողությունը վերջնական նպատակին հասցնելը կասեցրեց Լեռնահայաստանի հերոսամարտը, որի շնորհիվ Ռուսաստանը 1920-1921 թթ. Հայաստանի Հանրապետությանը չպարտադրեց համաձայնելու, որպեսզի Լեռնահայաստանը ևս Նախիջևանի և Արցախի օրինակով բռնակցվի Ադրբեջանին:

Մոսկվայի մարտի 16-ի գործարքից հետո, 1921 թ. հոկտեմբերի 13-ին մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի և Վրաստանի միջև Կարսում կնքված պայմանագրով Ռուսաստանը Հայաստանին պարտադրեց ստորագրելու Նախիջևանի երկրամասը Հայաստանից բռնազատելու Խորհրդային Ադրբեջանի «հովանավորությանը» հանձնելու համաձայնության տակ: Բայց Ռուսաստանը անտեսելով Կարսի դաշնագիրը ստորագրած կողմերի գոնե ձևական համաձայնությունը, 1924 թ. փետրվարի 9-ին Ադրբեջանին օժանդակեց Նախիջևանի երկրամասը հռչակել Ադրբեջանին մաս կազմող հենցավար Հանրապետություն: Դրանով Խորհրդային Միությունը չեղյալ դարձրեց 1921 թ. մարտի 16-ի և հոկտեմբերի 13-ի Մոսկվայի և Կարսի առանց այն էլ ապօրինի պայմանագրերը, որոնցով Նախիջևանի մարզը ոչ թե կցվում էր Ադրբեջանի խորհրդային հանրապետությանը, որպես այդ երկրի բաղկացուցիչ մաս, այլ հանձնվում էր նրա «հովանավորությանը»: Սևրի 3 տարի անց գումարված Լոզանի կոնֆերանսում Եվրոպան ամեն ջանք թափեց, որպեսզի Սևրը գոնե մասամբ իրականացվի՝ Թուրքիայից պահանջելով բռնազավթված մոտ 300 հազար արևմտահայերի համար «Ազգային օջախ» հատկացվի Վիլսոնյան քարտեզով գծված Արևմտահայաստանի տարածքներում, կամ Կիլիկիայում: Բայց ռուս և թուրք դաշինքի ջանքերով Լոզանի դաշնագրում Արևմտահայոց հարցը չընդգրկվեց:

Հետագա մոտ 70 տարիներին Ադրբեջանի բազմազգ բնակչության երբեմնի ավելի քան 35 տոկոսը կազմող հայերի թվաքանակը հայափախած գործողություններով հետզհետե նվազեց և Խորհրդային կայսրության կազմալուծման շեմին հասնում էր մոտ կես միլիոնի, որը Նախիջևանի երկրամասում, այնուհետև ամբողջ Ադրբեջանում իրականացված կոտորածներով ու բռնազաղթով, հասավ զրոյական մակարդակի: Նախիջևանահայերի ցեղասպանությունը շարունակվեց նաև մշակութային ասպարեզում: 1988-2006 թթ. ընթացքում Ադրբեջանը ոչնչացրեց նաև Նախիջևանի հայոց բազմաթիվ եկեղեցիներ և հուշարձաններ, իսկ 2003-2006 թ. վերջնականապես մեջտեղից վերացրեց Ջուլայի հազարավոր խաչքարեր և տապանքարեր ունեցող հայոց գերեզմանատունը, տեղը կառուցեց ռազմական օդակայան:

Քանի որ Ադրբեջանի ներկա հանրապետությունը իր հիմնադրման օրվանից (1991 թ.) հրաժարվել է Խորհրդային Ադրբեջանի ԻՐԱՎԱՅԱՏՈՐԴՈՒԹՅՈՒՆԻՑ, իսկ Խորհրդային Միությունն այսօր գոյություն չունի, ռուսի Կարսի ապօրինի դաշնագիրը անվավեր և ուժը կորցրած է նաև այդ դիտակետից: Դաշնագրի երկու հիմնական կողմերից մեկը, որին Հայաստանից անջատած տարածքներ են բռնակցել, ՋՐԿՎԵԼ է 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի անվավեր պայմանագրերի իրավական կողմերից մեկը լինելուց, այսինքն՝ երկրամասը Խորհրդային Ադրբեջանին բռնակցած պահելու ապօրինի իրավունքից: Ուստի, ըստ միջազգային իրավունքի իրավաբանական անհերքելի հիմքերի, Նախիջևանը օկուպացված-բռնազավթված տարածք է: Հետևաբար՝ ներկա Ադրբեջանը Խորհրդային Ադրբեջանի բռնազավթած Հայաստանի Հանրապետության Նախիջևանի երկրամասը իր տիրապետության տակ պահելու բացարձակապես որևէ իրավունք չունի և Հայաստանի Հանրապետությունը իրավական բոլոր հիմքերն ունի Հայաստանից բռնազավթած Նախիջևանը վերամիավորելու մայր հայրենիքին: Հայաստանին վերաբերող միջազգայնորեն հաստատված և ընդունված միակ փաստաթուղթը, որը այսօր ուժի մեջ է և բազմաթիվ իրավական օրենսդրությամբ, Սևրի պայմանագիրն է: Հայաստանի Հանրապետությունը իր սահմանները ճշտելու համար պետք է հիմնվի Սևրի 1920 թ. օգոստոսի 10-ի միջազգային դաշնագրով Վուդրո Վիլսոնի տնօրինությամբ գծված Հայաստանի քարտեզի վրա: Հիմք ընդունելով վերոշարադրյալ նկատառումները, ՀՀ իշխանություններին առաջարկում ենք.


ա. Միջազգային կառույցների (ՄԱԿ, Եվրախորհուրդ և այլն) օժանդակությամբ հասնել այն բանին, որպեսզի Սևրի պայմանագրի վերադարձնումով վերացվեն այդ պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետերը չիրագործելու պատճառով առաջացած հետևանքները:

բ. Պահանջել, որպեսզի 1921 թ. մարտի 16-ին բռնազավթված Նախիջևանի վերաբերյալ կնքվի միջազգային իրավագոր պայմանագիր:

գ. Հայաստանի Հանրապետության սահմանները Սևրի դաշնագրով վերահաստատելու և Նախիջևանը Մայր հայրենիքին վերամիավորելու նպատակով միջազգային նոր բանակցություններ սկսելու պահանջը դարձնել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը:

...Իսկ ազերի բարբարոսները այդ աշխարհի երեսից ցանկանում են վերացնել հայ փառանքի պատուները...





Պատգամավորների ընտրության օրն էր. կիրակի: Ինձ առաջարկեց միասին գնալ ընտրության: Գնացինք: Դա > 6

ԴԵՏԼԿԻ ՎՐԱ ԹԵՔՎԵԼ Է ՈՒՌԻՆ

➤ 5 տեղի էր ունենալու Պիոներ պալատում: Հանկարծ նկատեց, որ դիմացից գալիս է Դերեմիկ Դեմիրճյանը: Հանդիպեցին, իրար բարեկցեցին, ինձ էլ ծանոթացրեց վերջինիս հետ: Ես շատ ուրախացա այդ ծանոթության համար: Խոսեցին արվեստից, գրականությունից, հանկարծ հայրս ասաց.

- Չէ, Դերեմիկ, «Քաջ Նազարը» թո ստեղծագործությունն է, այնպես լավ ես մշակել, որ իբր դա ժողովրդական հեքիա՞ք է:

Դեմիրճյանը պատասխանեց, ես լավ հիշում եմ նրա խոսքերը.

- Է՛, Դանիել ջան, ինչո՞ւ պիտի վատ մշակելի, չէ՞ որ շուրջ բոլորս նազարներ են:

Երես էլ լիաբոք ծիծաղեցինք: Երբ ներս էինք մտնում, շենքից դուրս էր գալիս Ավետիք Իսահակյանը: Բարեկցուց հետո երկուսն էլ հարցրին.

- Ավետիք, ո՞ւմ ընտրեցիր:

- Նա պատասխանեց.

- Չգիտեմ, նայեցի՝ ցուցակում կար ոմն Գեորգով, ով-ը ջնջեցի, գրեցի Գևորգյան ու գցեցի արկղը:

...Անցան տարիներ: Կոմսերվատորիան ավարտելուց հետո ես աշխատում էի Ռադիոհեռուստատեսության կոմիտեում որպես հնչյունային ռեժիսոր: Հեռուստատեսության ռեժիսոր Մարատ Վարժապետյանը եկավ ինձ մոտ և խնդրեց, որ ձայնագրեմ Արամ Խաչատրյանի «Չոն Լենինի մասին» ստեղծագործությունը, սինֆոնիկ նվագախմբի, երգեցիկ խմբի կատարմամբ, որից հետո նկարահանումներ էին լինելու Լենինի հրապարակում: Երբ ես մտա ֆիլմի հարմոնիայի դիրիժորական սենյակը, ռեժիսորը և Արամ Իսկյը նստած գրուցում էին: Իսկույն Մարատը ասաց.

- Արամ Իսկյը, Լենինը մեր ռադիոյի ամենալավ հնչյունային ռեժիսորն է. ինքն է ձայնագրելու:

Արամ Իսկյը ձեռքը մեղմ խփեց սեղանին և ասաց հետևյալը.

- Այս հնչյունային ռեժիսորներին պետք է գնդախառնել:

Վիճակից դուրս գալու համար Մարատը ավելացրեց.

- Ի միջի այլոց, ինքը կոմպոզիտոր Դանիել Վազարյանի որդին է:

Արամ Իսկյը աչքերը գցեց ինձ վրա և ձեռքերը պարզեցավ ասաց.

- Մոտեցիր ինձ, թույլ տուր ճակատդ համբուրեմ:

Համբուրեց և ավելացրեց.

- Դանիել վոկալ արվեստի մեծ գիտն է. նա ունի հրաշալի երգեր և ռոմանսներ: Ես այդպես չեմ կարող երգ, կամ ռոմանս գրել:

Ես շնորհակալություն հայտնեցի այդ մեծ կոմպոզիտորին և առաջարկեցի ձայնագրությունը սկսել: Նա զգուշացրեց, որ իրեն չխղճամ: Ինչքան հարկավոր է, պարտիտուրայի ո՞ր հատվածից, ո՞ր համարից կարող եմ պահանջել կրկնել, ինքը պատրաստ է:

Ինչ վերաբերում է մեր՝ հայր-որդի հարաբերությանը, մենք եղել ենք ոչ միայն հայր և որդի, այլ եղել ենք ընկերներ: Ամեն հարցում նա եղել է իմ խորհրդատուն: Իմ կողմից ոչ լավ արարքի դեպքում անգամ ձայնը չի բարձրացրել, այլ դաստիարակել է խոսքով:

Հիշում եմ, երբ պատանի էի, մեկ անգամ չափից ավելի խմած տուն եկա: Նա ուշադիր նայեց ինձ և ասաց.

- Դու մեխանիկայից լավ հասկանում ես: Եթե մի մաս փչանում է, ի՞նչ եմ անում:

Ես պատասխանեցի, որ եթե վերանորոգել չի լինի, դեմ եմ գցում, փոխարինելով մեկ ուրիշով: Այդ օրվանից մինչ այսօր ես միայն գինի եմ խմում, այն էլ չափավոր...

1944 թվականին հայրս ստացավ վաստակավոր ուսուցչի կոչում. մեր տանը հավաքույթ էր: Ներկա էին Ավետիք Իսահակյանը, Դերեմիկ Դեմիրճյանը, Գեղամ Մարյանը... Միջախել Միրզայանը, Ազատ Մանուկյանը, Վահան Ումր-չատը... երգչուհի Շողիկ Մկրտչյանը և ուրիշներ: Արմենակ Տեր-Աբրահամյանը ուշանում էր. որոշեցինք սկսել: Ավետիք Իսահակյանից ոչ նշանակեցին թամաղա: Իսահակյանը բարձրացնելով բաժակը, ցանկացավ խոսել... Հանկարծ դուռն հետևից լսվեց Արմենակ Տեր-Աբրահամյանի ձայնը. երգում էր Գ. Վազարյանի «Լանջեր մարջան»-ը: Հայրիկս ինձ գլխով արեց,

թե՛ դիմավորիր: Ես վազեցի, դուռը բացեցի, երգելով եկավ հավաքվածների մոտ և այն վերջացրեց բուն ծափահարության ներքո:

Ավետիք Իսահակյանը առաջարկեց խմել հայրիկիս կենացը և ավելացրեց.

- Դանիել ջան, երբ ես Փարիզում էի, եղա մի ռեստորանում, որտեղ նվագում էին հայկական երաժշտություն և երգում: Երգեցին մի հրաշալի երգ: Երաժշտությունը ինձ շատ դուր եկավ: Ես մոտեցա և հարցրի, թե այդ ի՞նչ եմ կատարում:

Ասացին.

- Վարպետ, Չեր երգն է. «Ուտին»...

Չարմացա.

- Բա երաժշտությունն ո՞ւմն է:

Ասացին՝

- Դանիել Վազարյանին:

Նրանք երգում էին միայն մեկ տունը: Ես՝ ոգևորված երաժշտությամբ, երբ տուն էի վերադառնում, իմ մեջ ծնվեց երկրորդ տունը: Ահա՛ այն:

Նա իր գրպանից հանեց երկրորդ քառատողը և տվեց հայրիկիս:

Ռադիոհեռուստատեսության կոմիտեում աշխատում էր նաև արձակագիր Վահան Արամունին: Իմանալով ո՞ւմ որդին եմ, ասաց.

- Գնացել էիք Վարպետի տուն: Երբ Վարպետը ռադիոն միացրեց, հնչեց հաղորդավարի ձայնը. «Այժմ լսեցե՛ք Դանիել Վազարյանի ստեղծագործությունները»:

Կատարում էին «Ուտին» երգը: Վարպետը գլուխն առավ իր ավիերի մեջ և լուռ լսում էր: Մենք էլ քարացած նստել էինք, որպեսզի Վարպետին չխանգարենք: Երբ երգը վերջացավ, նա ասաց.

- Միայն Դանիելն է, որ ինձ հասկացել է: Մենք էլ ավելացրինք.

- Վարպետ, բա «Քույր իմ մագելի»-ն ինչքան լավն է:

1963 թվականին նախկին ԱՊԻ-ի դահլիճում տեղի էր ունենում Դանիել Վազարյանի 80-ամյակին նվիրված հուշ երեկո: Երբ երգիչ Շարա Տալանը կատարեց «Սոսիների տակ» ռոմանսը, Էդուարդ Միրզոյանը, որ նստած էր իմ կողքին, շրջվեց դեպի ինձ և ասաց.

- Ա՛յ, այս ռոմանսը արժե մեկ օպերային արիա:

1916 թվականին Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտ» վիպակից գրում է «Նազեի օրորը» երգը և տպագրվում է: Իր մտքով անցնում է ցույց տալ Ահարոնյանին: Գնում է ինչ-որ տեղ և հանդիպում Ահարոնյանի հետ: Ահարոնյանը նրան ուղեկցում է մի մեծ սենյակ: Սեղանի շուրջը նստած են լինում մի գեներալ, մորուքով մի մարդ և էլի ուրիշներ: Ահարոնյանը նոտաները նայելով ասում է.

- Տղա՛ս, այսպես նայելով մենք ոչինչ չենք հասկանա:

Ու ցույց է տալիս ռոյալը: Հայրս մոտենում է ռոյալին, նվագում և երգում է: Վերջանալուն պես Ահարոնյանը, որ հենված էր ռոյալին, ասում է.

- Ես ի՞նչ արեցիր, փաշային լացացրիր: Եվ ուղեկցում է դեպի գեներալը: Պարզվում է, որ գեներալը Անդրանիկն էր, իսկ մորուքովը՝ Լևոն Շանթը:

Թբիլիսիում, կոմսերվատորիայի վոկալ բաժնում ուսանելիս, հենց առաջին կուրսում, ռեկտորը հայրիկիս կանչում է իր մոտ և առաջարկում.

- Երիտասարդ, չնայած լավ ձայն ունես և լավ երաժշտական ունակություն, բայց քանի որ կարճահասակ ես, բեմում չես երևա, ուստի անցիր ստեղծագործական դասարան: Մասնորո Բրոքինգն և անցնում է պրոֆեսոր Հարթմանի դասարանը, իսկ դաշնամուրի դասարանում, անունը, ցավոք, չեմ հիշում, առաջարկում է ամռանը պարապել հետը՝ Քոբուլեթի իր ամառանոցում: Եվ ամբողջ երեք ամիս նա ապրում է ամառանոցում և պարապում անվճար:

Կոմսերվատորիայում ուսանելու տարիներին նա սովորել է մի հարուստ հայ վաճառականի հաշվին, որը օգնել է ևս 75 ուսանողի: Հայրս մինչև իր կյանքի վերջը երախտապարտ էր, միշտ հիշում էր նրան և մյուս բարերարներին...

Լենինադ ՂԱԶԱՐՅԱՆ

Գլուխը համաճարակները, որոնց կոչում են պանդեմիաներ, ընդգծված համախառնությամբ ցնցում են մարդկությանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը գուցե քիչ տարբեր հիվանդությունների բռնկումների մասին հաղորդագրությունները աշխարհով մեկ տարածվում են կայծակնային արագությամբ: Իսկ եթե նկատի առնենք, որ ընթերցող լսարանի համար մղվող պայքարում թերթերը, ամսագրերը, հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետը միշտ չէ, որ պահպանում են օրինավորության կանոնները, ապա հասկանալի է դառնում վերջին ժամանակներս հրապարակ հանվող գիտական և «գիտական» սենսացիաների անսահման առատությունը:

Ի դեպ, բնությունը երբեմն իսկապես հրամցնում է տիպիկ անակնկալներ, որոնց մարդկությունը պատրաստ չէ դիմակայել: Այդ իրական սպառնալիքների համար հնարված է նույնիսկ հատուկ տերմին՝ «նոր և վերադարձող վարակներ»:

Առողջության համաշխարհային կազմակերպության կարծիքով հենց այդպիսի վարակների բռնկումները հնարավոր է աշխարհի ցանկացած անկյունում և ցանկացած պահի:

Նոր վարակները, ինչպես տրամաբանական է ենթադրել, հարուցվում են մինչ այդ անհայտ միկրոօրգանիզմների կողմից:

Նման վիրուսները (վարակահարուցիչ) և բակտերիաները դեռևս չառ-չառ են: Չնայած գիտության զարգացմանը մարդկությունը դեռևս չառ փոքրիկ բայլ է կատարել միկրոաշխարհի ուսումնասիրության ոլորտում: Սա նշանակում է արդյոք, որ բնության մեջ ինչ-որ տեղ գոյություն ունի միկրոկենսաբանական լաբորատորիա, որը շարունակաբար «թխում է» նոր արտադրանք: Մեծամասամբ՝ ոչ: Պարզապես մարդը կամա թե ակամա ներխուժում է ինչ-որ վարակի բնական օջախը և շնչի բաց է թողնում հեթանոսական զինը:

Այս տեսակետից բնորոշ է խոլերայի պատմությունը: Պատմականորեն, դարեր շարունակ այս

ԴԱՔԵՆՎԱԾ ՄՊԱՌՆԱԽՔՆԵՐ

վարակի գլխավոր օջախը համարվում էր Հնդկաստանը: Մանիտարական և հիգիենայի տեսակետից այնտեղ այսօր էլ մի բարվոք վիճակ չէ, սակայն նախկինում խոլերայի բռնկումները, որոնք բազմաթիվ մարդկանց մահվան պատճառ էին դառնում, ունեին տեղային բնույթ:

Խոլերայի պանդեմիաների (համավարակության) գլոբալացման, այսինքն, երբ համաճարակը դուրս պրծավ երկրագնդի առանձին տարածքից՝ մարդկությունը պետք է «շնորհակալություն» ասի Մեծ Բրիտանիային: Գաղութային պատերազմները, որոնք 19-րդ դարի սկզբին բրիտանական կայսրությունը վարում էր Միջին Արևելքում, հնարավորություն ընձեռեցին խոլերային դուրս պրծնել իր բնական օջախից և տարածվել ողջ մոլորակով մեկ:

1817 թվականին բռնկվեց խոլերայի առաջին պանդեմիան (համավարակ): Այդ ժամանակներից խոլերան պարբերաբար հիշեցնում է իր մասին: Մենք այսօր ապրում ենք յոթերորդ պանդեմիայի ժամանակներում, որն սկսվեց 1961 թվականին, սկիզբ առավ Ինդոնեզիայում և ակնբարբորեն տարածվեց ավելի քան 50 երկրներում: 1970-ին այն մտավ նաև Խորհրդային Միություն՝ Աստրախանի մարզ և Ուլյանովսկ:

Գրեթե նմանօրինակ վիճակ առաջացավ չնչառական սուր ախտանշիչի հետ, որը մեծ աղմուկ առաջացրեց համաշխարհային հասարակության մեջ: Այդպիսի վարակահարուցիչը, որը առաջացնում է չնչառական օրգանների սուր ախտը, հայտնաբերվել է Չինաստանի հարավում ապրող ոչ մեծ գիշարակց կաթնասունների 70 տոկոսի արյան մեջ: Ի՞նչ կապ ունի, կառարկեն մեզ: Այնինչ կապը անհիշական է, ուղիղ: Այդ կենդանիներին Չինաստանում ուտում են, և համարվում է «լիխտար» սնունդ: Պատահական չէ, որ այդ հիվանդության մասին հայտարարված 8,5 հազար դեպքերից (2002-03 թթ.) միայն 300-ն է բաժին ընկնում մնացած աշխարհին, իսկ հիվանդացածների հիմնական գանգվածը ընկնում է հարավային Չինաստանին, Հոնկոնգին, Թայվանին և Սինգապուրին:

«21-րդ դարի ժամախառն» հեթանոսական հավակնորդը թոշնային գրիպն է: Ողջ աշխարհում այն տեղ է գրավում մոլորությունների թողարկումների վերին տողերում: Ահա այն արժանագրվել է Ինդոնեզիայում, ահա այն անցավ Ռուսաստան, ահա այն հասավ բարեկեցիկ Եվրոպա: Ամերիկյան անապարհաբերով լրացնում է դեղորայքի և պատվաստուկների ստրատեգիական պաշարները: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, ինչպես ուսմասվարը կարգազանց աշակերտներին, նախատում է Չինաստանին «փչացած» հակավիրուսային միջոցների համար: Ամենքը պատասխան են չարագույժ վարակի բռնկմանը, վարակ, որը ունի մարդկային գրիպի վարակիչություն և թոշնային գրիպի մահացություն: Տարբեր հաշվարկներով նման վարակը կարող է խլել 5-ից 150 միլիոն մարդու կյանք:

Ի դեպ, թոշնային գրիպը, որից այդքան վախենում են, նոր երևույթ չէ: Առաջին անգամ այն հայտնաբերել են Իտալիայում, 100 տարի առաջ:

Ինչպես հուշում է անունը, թոշնային գրիպը առաջինը վարակում է թոշններին: Ըստ որում, նկատված է, որ հիվանդանում են բացարձակապես բոլոր թոշնները մի մասը քիչ, մի մասը ավելի շատ: Հաշվարկված է թոշնային գրիպի 15 ենթատեսակ, բժշկները դրանցից ամենավտանգավորը համարում են H5N1 տեսակը: Առաջին անգամ այս ենթատեսակի մասին խոսեցին 1997 թվականին: Հոնկոնգում արժանագրվեց չնչառական օրգանների ծանր հիվանդության 18 դեպք, վեց մարդ մահացան:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ հիվանդության աղբյուրը վարակակիր տնային թռչուններն են, որոնց հետ հիվանդացածները շփում են ունեցել: Գենետիկական մակարդակի հետազոտությունները հնարավորություն տվեցին պարզել, որ վիրուսը փոխանցվել է միայն ու միայն թռչունից: Մակայն եթե փորձենք պարզաբանել, թե ինչ է նշանակում անմիջական շփում հիվանդ թռչունների հետ, պարզ կդառնա, թե ինչու է թոշնային գրիպը այդքան տարածված Հարավարևելյան Ասիայի մարդկանց շրջանում: Այս տարածաշրջանում ավանդաբար սննդի մեջ առկա է նաև թռչնի հոտ արյունը: Եթե սրան ավելացնենք բնակչության գերխտությունը, հակասանդիտարակային վիճակը, բժշկական սպասարկման ցածր մակարդակը՝ կհասկանանք համաճարակաբանների սարսափի պատճառը:

(ԻՆՏԵՐՆԵՏԻՅ)

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների միջև ընկած է համարյա ամբողջաշխարհային մի աշխարհամաս... Բրազիլիա, Չիլի, Պերու, Էկվադոր, Արգենտինա, Բոլիվիա, Ուրուգվայ, Պարագվայ...

Մեր նախորդ համարում մենք հրապարակեցինք Լատինական Ամերիկայի տարածքում հայտնաբերված հինավուրց քաղաքակրթության՝ ինկերի և ագտեկների մասին:

Մինչև այսօր էլ նրանց պատմական անցյալը գիտականների ուսումնասիրությունների անապատ բեման է:

Կարծես թե ժամանակակից քաղաքակրթությունը մուտք է գործել միայն խոշոր քաղաքները, որոնք ցամաքով միմյանց հետ կապվում են մինչև 4000 մետր բարձրության հասնող երկարությունով:



Լևոն Մատինյանի «Ֆիզիոլոգի նոթեր» գրքի մասին

Գիրքը ընդգրկում է հետաքրքիր հոդվածների (նոթերի) շարադրություն: Գիրքն ավարտվում է հեղինակի առակներով և բանաստեղծություններով:

Հեղինակի «նոթերի» առաջին հատորը նվիրված էր Հայաստանում և ցրանից դուրս կատարված բժշկական-կենսաբանական ուղղություն ունեցող գիտահետազոտական աշխատանքների շարադրմանը: Այս երկրորդ հատորում հեղինակը շարադրում է բազմաթիվ հետաքրքիր դեպքեր, որոնցից շատերը ունեն իրենց ֆիզիոլոգիական բացատրությունը, ինչը հեղինակը ներկայացնում է ֆիզիոլոգիական խորը մեկնաբանությամբ: Օրինակ «Ծիծաղի բուժիչ արդյունքը», «Թեյի օգտագործման օգուտները», «Անքնության մեխանիզմը»:


Գրքում կան ծիծաղաշարժ, գլարձալի, ինչպես նաև տխուր բնույթի պատմություններ:

Բոլորը շարադրել չեն ցանկանում, բայց մի բանիս վրա ուզում են ուշադրություն հրավիրել: Օրինակ «Անմոռանալի նվերը», որտեղ ծաղրվում է մի ժամ պրոֆեսորի կեղծ կոնյակի պատմությունը: Հետաքրքիր է բակալանի դպրոցականի կողմից տրված կաշառքի պատմությունը, հետաքրքիր է նաև «Գո-դին բռնեք» հոդվածը: Չվարձալի հոդվածներից ցանկանում են նշել «Թրիլիսի բաղնիքում», «Բանտախցում» գլարձալի դեպքերը կամ Արգենի առողջարանում հիվանդներին ոչ ճիշտ տեղավորելու պատմությունը՝ կատարվածը հենց հեղինակի հետ: Հետաքրքրություն է նաև կարողացվում նաև «Ֆլորա» աշուժ, «Գործողման հետևանքները», «Գրպանահատներին պատիժ տալու» պատմությունները:

Ամփոփելով, ցանկանում են նշել, որ գիրքը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն ֆիզիոլոգների, բժիշկների, կենսաբանների, այլև ընթերցողների լայն շրջանակի համար:

Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԵՂԾՎԱԾՆԵՐԸ



ՔԱՂԱՔ-ՈՒՐՎԱԿԱՆԵՐ

Ժամանակակից Կամպուչայի (երբեմնի՝ Կամբոջա) ջունգլիներում կորած այդ քաղաքի՝ Անգկորի մասին, եվրոպացիները առաջին անգամ լսեցին 19-րդ դարի երկրորդ կեսին՝ ֆրանսիացի բնախույզ Անրի Մուսի գրքից: Սկզբնական շրջանում ոչ մեկը չհավատաց «կորուսյալ քաղաքի» գոյությանը՝ համարելով հեքսական առասպել, որ սիրում են հորինել արևելա-ասիական ժողովուրդները:

Մական որոշ ժամանակ անց, որոշ խանդավառ գիտնականներ, այնուամենայնիվ, հանդգնեցին անցնել Անրի Մուսի անցած ճանապարհով (Անրի Մուսը տեղից մահացել էր Լաոսում) և համոզվեցին, որ «կորուսյալ քաղաքի» պատմությունը առաջին չէ, այլ՝ իրողություն: Մեռյալ քաղաքը, որի մասին վաղուց-վաղուց մոռացել էին, գտնվեց անանցանելի ջունգլիների միջև քավումներում:

Առաջին հետազոտողները, որոնք հարկադրված էին տապալներով արահետ բացել ջունգլիներում, հանկարծ ապշահար, հիացած, գմայված քարացան իրենց առջև բացված տեսարանի առջև: Ամենաբարձր ծառերի հարևանությամբ երևում էին հսկայատիպ տաճարներ: Անգամ ուղղահայաց մագլցած լիանաների ցանցը, հաստաբետ ծառերը անկարող էին ծածկել այդ վեհաշուք կառույցները:

Ջունգլին անապատ չէ և ոչ էլ չոր տափաստան, ուր կառույցները հազարամյակներով կարող են պահպանվել: Այստեղ ամեն ինչ այլ է: Լիանաները փաթաթվում, արցանի մեջ են առնում շենքերի պատերը, ճեղքում, մասնատում դրանք, իսկ կանաչ, փաթթած բուսականությունը դառնում է անտեր մնացած տանիքների լիքավ տերը: Մարդու ձեռքով ստեղծված ամեն-ամեն ինչ բուսականության ավերիչ գրոհի հետևանքով կործանվում է, փոշիանում:

Մական Անգկորը կարողացել է խուսափել այդ ճակատագրից, թեև ժամանակն ու արևադարձային ջունգլին, այ-

նուամենայնիվ, արել են իրենց «սև» գործը. քարե հսկա աստիճանները խաբխվել-տեղաշարժվել են, մասամբ ծածկվել թավ մամուռով: Բայց մի բան ակնհայտ է. հնադարյան շինարարները հիմնավոր էին արել իրենց գործը: Եվ հենց նրանց ցեղակիցները, մոտավորապես 1500 տարի առաջ ստեղծեցին Ասիայի հզորագույն կայսրություններից մեկը՝ Կլամերական թագավորությունը: Կլամերների կայսրության ծաղկման շրջանում Մեկոնգ գետի հովտում ապրում էր մոտ մեկ միլիոն մարդ: Մոտավորապես 800 բվականին Անգկորը դարձավ կլամերների մայրաքաղաքը: Իսկ կլամերական ճարտարապետության մարգարիտը՝ Անգկորվատ տաճարը, կառուցվել է 12-րդ դարում, երբ թագավորում էր Սուրյավարմա II արքան: Տաճարի հիմքի մակերեսը 800 քառակուսի մետր էր, նրա հարևանությամբ գտնվող փոքրիկ լճի հայելում արտացոլվում էին վեհանիստ տաճարի պերճաշուք աշտարակները: Պաշտամունքային այս կառույցը

իր տեսակով մինչև օրս գաղտնիք է մնում գիտնականների համար: Կարծես թե այն եղել է մասամբ ինդուիստական, մասամբ էլ՝ բուդդայական տաճար: Եղել են նաև այլ մանրամասներ, որոնք հատուկ չեն եղել այդ կրոններից ոչ մեկին:

Անգկորվատը ընդհանրապես նման չէր հին աշխարհի կառույցներին: Կլամերների կառուցողական արվեստը արտատվող էր: Երկնամուղ պերճ աշտարակները հենված են քառակուսի հիմքերի վրա և աստիճանաբար վեր խոյանալով՝ վերնումնեղանալով ստանում են աստղի ձև: Հսկա քարաբեկորների շարվածքը շաղախով չի ամրացվել, այլ քարերն իրար են ագուցվել մետաղյա կետերով, որոնք գտնվում էին քարերի մեջ: Ամբողջ շինությունը կանգուն էր ծանրության ուժի շնորհիվ: Տաճարը գործնականում մեր պատկերացրած հիմքը չուներ: Անգկոր քաղաքի բոլոր կառույցները շինարարները այնքան ճշգրիտ էին հաշվարկել, որ դրանք պետք է կանգուն մնային հազարամյակներ: Եվ պետք է խոստովանել՝ հնադարյան ճարտարապետները երբեք իրավացի էին: Նրանք ամեն բան հաշվարկել էին կատարյալ ճշգրտությամբ ու փարպետությամբ: Նրանք չէին հաշվարկել միայն մեկ բան, այն, որ մարդիկ մի օր կլքեն տաճարային պերճաշուք համալիրն ու հոյակերտ քաղաքը:

1431 բվականին սիամցիները գրավեցին քաղաքը և բնաջնջեցին բնակիչներին՝ մինչև վերջին մարդը: Ջունգլին կանաց, բայց անմահանջ, բայց առ քալ իր գիրկն առավ քաղաքը, որի ամայի փողոցներում թափառում էին քաղցած կոկորդիլոսները:

Մեռած քաղաքը մոռացվեց: Պետք է անցնեին հարյուրամյակներ, որ մարդիկ բարձրաձայն խոսեին քաղաք-ուրվականի մասին և հաստատեին, որ «կորուսյալ քաղաքի» պատմությունը առասպել չէ, այլ իրողություն: Եվ սկսվեց գրոսաշրջիկների երթը...

ՄԵՆՍԱԺԻԱ

ՔԱՂԱՅԵՂԸ ԲՈՒԺԵԼՈՒ ԵՆ...

միլիարդավոր

նախորդողների օգնությամբ

Կալիֆոռնիայի Դեվիսի համալսարանի որոհետար Սալլի Դեմարտոն և նրա գործընկերները բաղկացնում են ռուտին փուլերով համար հաջողությամբ կիրառեցին հասուկ ջերմային մանոգոնդեր:

Քաղցկեղի դեմ ուժեղ տաքացման (խարկման) միջոցը օգտագործելու հարցը բժիշկ-գիտնականները վաղուց են բնութագրում: Եվ միշտ գլխավոր խնդիրը եղել է տաքացման (խարկման) հատուկ ճշգրիտ սահմանափակումը և առողջ հյուսվածքների պաշտպանությունը:

Այս խնդիրը կարծես թե լուծել են վերոհիշյալ նոր եղանակի հեղինակները, որոնք ստեղծել են արտասովոր մանոգոնդեր: Դրանցից ամեն մեկը բաղկացած է մանրագույն գնդիկից, որը պատրաստված է մագնիսացված երկաթի օքսիդից՝ համակցված ռադիոակտիվ դրոշմներով լիցքավորված մոնոկլոնալ հակամարմնի հետ: Նախորդողները ծածկված են շաքարով և պոլիմերներով, որոնք այն բողբոջում են օրգանիզմի իմունային համակարգի «սուր աչքերից»:

Նման միլիարդավոր մանոգոնդեր գիտնականները մտքորին մկների արյունատար համակարգի մեջ. ի դեպ, այդ մկները արդեն ունեն թաղցկեղային ուռուցք: Գնդիկները՝ թափառելով օրգանիզմում, ի վերջո կուտակվեցին թաղցկեղային բջիջների մակերեսին և հակամարմնի օգնության միացան ուռուցքի բջիջների առանձնահատուկ ռեցեպտորների (ընկալիչների) հետ:

Երբ օր հետո հետազոտողները ուռուցքի վայր ուղարկեցին բարձր հաճախականության (հազար հերց) փոփոխական մագնիսական դաշտ, որը նույն ակնթարթին բարձրացրեց մանոգոնդիկների ջերմությունը:

Միակ, 20 րոպեանոց մշակումից հետո (չափաբաժինները հաշվարկված էին համակարգչով)՝ հիմք ունենալով հյուսվածքի և մանոգոնդիկների տարբեր պարագծերը: Ապա գիտնականները սկսեցին հետևել մկների պահվածքին: Պարզվեց, որ ուռուցքի աճը դանդաղել է, քանի որ թաղցկեղային շատ բջիջներ արդեն սպանվել են:

Միաժամանակ պարզվեց նաև, որ մանոգոնդիկների գործունեությունը օրգանիզմի վրա ոչ մի վնասակար (ու նաև տոկսիկ) հետևանք չի բողնում:

Պրոֆեսոր Սալլի Դեմարտոն համոզված է, որ իրենց նորամուծությունը մոտ ապագայում կարող է կիրառվել մարդկանց պատուհասող տարբեր տեսակների թաղցկեղային ուռուցքների բուժման համար:



Աֆրիկյան փղերի նախահայրը մամոնտն է, որը պարզվում է ապրել է ոչ միայն Աֆրիկայում և այլ արևադարձային տարածքներում, այլև Ասիայի հսկա տարածքներում: Մամոնտի կմախքները գտնվել են Ասիայի այսօրվա ցուրտ գոտիներում, մասնավորապես Տայգայում: Սիբիրյան մամոնտների մասին գիտեինք, նաև գիտեինք, որ Չայաստանում ևս ապրել են մամոնտներ: Իսկ ահա վերջերս գիտնականները հայտնաբերել են եվրոպական մամոնտի մնացորդները, մասնավորապես Ֆրանսիական Ալպերում: Կնշանակի, տաք գոտին տարածված է եղել եվրոպայի հսկա տարածքներում և ունեցել է կենդանական-բուսական հարուստ աշխարհ:

Վաղվա մարահոգություն

Ներկայումս աշխարհում գոյություն ունեցող հոդմաէկետրականների գումարային հզորությունը կազմում է մոտ 50 հազար մեգավատ: Չայաստանում առայժմ միակ հոդմաէկետրակայանը գտնվում է Պուշկինի էլեմանցքում և ունի 2,6 մվտ հզորություն: Տեղադրված է չորս ագրեգատ:

Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի Տեխնոլոգիական համալսարանի մասնագետները առաջարկում են հոդմաէկետրակայանները «տեղադրել» 4500 մետրից մինչև 15.000 մետր բարձրության վրա: Քամին, որն ունի մինչև 300 կմ/ժամ արագություն կպտտի ռոտորը և կարտադրվի էլեկտրական էներգիա: Այն կտեղափոխվի երկրի մակերես՝ գերամուր մալուխների միջոցով:


Նախատեսվում է կառուցել 200 կվտ հզորության կայանքի աշխատանքային մոդելը: Յուրաքանչյուր տուրբինի բաշը կկազմի մոտ 20 տոննա:

Սպեկիան ՊԵՊԻՅՅՆ
Տեխնիկական գիտ. քննաձու

Սահարան ընդարձակվում է



Աֆրիկյան մուսոնները սպառնում են... Չորացնող քամիները, աֆրիկյան կիզիչ արևը ահեղի տարածքներից կանում են խոնավությունը՝ այդ տարածքները դարձնելով անպտուղ անապատներ: Սիբազային գիտական հանրությունը ջանքեր է թափում այդ վտանգավոր գործընթացը կասեցնելու համար: Ավադ... Այսօր խոսել վճռական արդյունքների մասին, շատ վաղ է... Մուսոնները համարյա չի են դարձնում գիտական հանրության ջանքերը: Նրանք շարունակում են սպառնալ Աֆրիկային՝ ավազաթմբերը դարձնելով հիմնական լանդշաֆտ: Սահարան տարածում է թևերը: Ի՞նչ է սպասում շոգ մայրցամաքին:



Ավելի փոքր՝ անհնար է

Ինդոնեզիական Սուամա-
րա կղզու ջրերում ապ-
րում է մի ձկնիկ, որ տա-
րածքի կենդանական աշ-
խարհի ամենապստիկ
ներկայացուցիչն է: Այդ
ձկնիկ կոչված է երկա-
րությունը... 7,9 միլի-
մետր է:

Ո՞րն է լավը՝ սանրելը, թե քիմիան..

Սենսացիա: Հայտնա-
գործվել է ոչլուծյալ դեմ
պայքարելու նոր միջոց,
որն անհամեմատ արդյու-
նավետ է բոլոր այն մի-
ջոցներից, որոնք թողար-
կում և վաճառում են մո-
լորակի դեղագործական
ֆիրմաները:

Այդ գյուտը հայտնա-
գործվել է հին ու բարի
Բրիտանիայում: Ի դեպ
արձանագրված է, որ
Անգլիայում դեռահասնե-
րի շրջանում ոչլուծյալ-
յունը բավական բարձր է:

Գյուտը կամ նորությունը
սուր և խիտ ատամներով
հատուկ սանր է, որի օգ-
տակարության գործակի-
ցը ոչլուծյալ դեմ պայքա-
րում կազմում է 57 տո-
կոս՝ քիմիական դեղամի-
ջոցների 13 տոկոսի դի-
մաց: Այլ խոսքով՝ ավելի
լավ է քորել, քան թե ինչ-
որ հեղուկներով լողզել
գլուխը:

Տեղեկացանք սույն
հայտնագործության մա-
սին և, անկեղծ ասած, մի
քիչ զարմացանք, զի
անգլացիները կրկին հե-
ծանիվ են հայտնագոր-
ծել: Չէ՞ որ այդ սանր-
գյուտը անհիշելի ժամա-
նակներից հայ մամիկ-
ներն ու տատիկները օգ-
տագործել են այդ անիծ-
յալ միջատների դեմ պայ-
քարում տեղյակ էլ չլի-
նելով, որ դա կհամարվի
հայտնագործություն: Այ-
լապես հեղինակային
վկայական կպահանջեն:

Ա՛յ քեզ բողկ...

Իսրայելցի բանջարաբույծ
Նիսսան Թամիրը ոչ թե զար-
մացած էր, այլ ջնջված: Մի քա-
նի ժամանակ առաջ նա շուկա-
յից գնեց ամսեկան բողկի «Էլի-
տար» սերմեր, այն համեստ
ակնկալիքով, որ լավ, առատ
բերք ստանա: Սակայն, որ այդ
մեծության ամսեկան բողկեր
կաճեն իր բանջարանոցում՝
վեր էր սպասածից:


Դեռ այն ժամանակ, երբ
հողի երեսին երևացին բույսի
խոշոր, փարթալ քիթերը, նա
արդեն հասկացավ, որ սերմ
ծախողը իրեն չի խաբել:

Բայց և այնպես, ստանալ
ամսեկան բողկ, որի յուրա-
քանչյուր պալար կշռի 20 կի-
լոգրամ, հավատացեք, գրեթե
ֆանտաստիկայի ոլորտից է:

Սակայն փաստը մնում է
փաստ: 20 կիլոգրամանոց ամ-
սեկան բողկերը իրողություն



Տե՛ր ողորմեա՛....



«Թե՛ն Երկիր մոլորակը ունի մթնոլորտ և կյանքի
համար խիստ անհարժեշտ թթվածին և ածխաթթու գա-
զեր, սակայն մեր տիեզերագնացների արած այս լու-
սանկարները վկայում են, որ մոլորակի այս հատվա-
ծում չկա բուսականություն, ջուր, հետևապես կյանքի
վկայություններ»,- մոտավորապես այսպես կմեկնաբա-
նեն այլ մոլորակայինները, եթե նրանց տիեզերանավը
վայրէջք կատարեր Չանգեզուրի այս հատվածում: Իսկ
սա մեր լեռնաշխարհի և Երկիր մոլորակի գեղեցիկ անկ-
յուններից մեկի՝ Չանգեզուրի հանրահայտ լեռներն են,
քամուց, անձրևներից հողմահարված սյուները ասես
շուրջպար բռնած քարե հսկաներ լինեն:



Էին: Նիսսան Թամիրը մեկ օրում հայտնվեց զանգ-
վածային լրատվամիջոցների ուշադրության կենտ-
րոնում անշուշտ իր գերհսկա ամսեկան բողկերի
հետ:

Ամառը եկավ.

ՃԱՆԱԶԻՐ ԹՇՆԱՄՈՒԴ

Ամառը արվա դավադիր եղանակն է, եղի՛ր զգույս և
հաճախ լվա՛ ձեռքերդ: Ըստ որում՝ օձառով:

Աղիքային հիվանդություններով մարդիկ
հիվանդանում են հատկապես ամռանը: Դա
պայմանավորված է նաև նրանով, որ ամառը
մենք շատ ենք հեղուկ ընդունում, որի
հետևանքով ստամոքսաճեղքը, որը ոչնչաց-
նում է վնասակար միկրոբները, թուլանում է
և չի կարողանում կատարել իր խնդիրը:

Աղիքային հիվանդությունների հարուցիչ-
ները կարող են լինել բակտերիաները (սալ-
մոնելեզ, դիզենտերիա, խոլերա), ինչպես
նաև սրանց տոկսինը (բուտուլիզմ): Հիվանդ-
ներից և վարակակիցներից միկրոբները ար-
տաքին միջավայր են մտնում արտաթորա-
քի, փսխուկի, երբեմն նաև մեզի միջոցով:
Աղիքային վարակների հարուցիչները գործ-
նականում չափազանց կենսունակ են: Դրանք
ընդունակ են երկար ժամանակ գոյատևել հո-
դում, ջրի մեջ և անգամ տարբեր առարկանե-
րի վրա: Օրինակ, գդալների, ավաճեղների, դռնե-
րի բռնակների և կահույքի վրա: Նրանք ա-
րագ սկսում են բազմանալ կաթնամթերքնե-
րի, աղացած մսի և ջրի մեջ (հատկապես ամ-
ռանը):

Ինչպե՛ս ճանաչել վարակը

Հարուցիչները մարդկային օրգանիզմ են
ընկնում սննդամթերքի, ջրի հետ, ինչպես նաև
կեղտոտ ձեռքերի միջոցով: Օրինակ, դիզեն-
տերիան կարող է սկսվել, երբ խմես ծորակի
ջուրը, չեռացրած կաթը կամ սրանից պատ-
րաստված թթվասերը, կաթնաշոռը: Աղիքային
ցուպիկը կարելի է կոչ տալ մաժուճի կամ յո-
գուրտի հետ: Ստաֆիլոկոկային վարակակիրը
իրեն հրաշալի է զգում հնացած թխվածքների
կրեմային զանգվածի մեջ:

Սալմոնելոզի հարուցիչները (իսկ դրանց
տեսակները հասնում են 400-ի) մարդու օրգա-
նիզմ են ընկնում արդեն վարակված մթերքնե-
րի միջոցով, հավի միս և հավկիթ, երշիկ, նրբեր-
շիկ, լավ չլվացված և ոչ մաքուր ջրով լվաց-
ված բանջարեղենի, մրգերի և կանաչու հետ:
Հարուցիչների օրգանիզմ ընկնելուց 6-48 ժամ-
վա ընթացքում հիվանդությունը սկսում է իր սև
գործը:

Հիվանդության նախնական շրջանում մար-
դը բուլբոլյուն և ընկճվածություն է զգում, կորց-

նում է ախորժակը, կարող է ցավել գլուխը կամ
բարձրանալ ջերմությունը: Արտաքուստ կարող
է թվալ, թե մարդը թունավորվել է կամ ուժեղ
մրսած է: «Սարսափելի բան չկա, մի քանի հար-
ասպիքին կույ կտամ կամ ակտիվացված ա-
ծուխ և կանցնի»,- մտածում է մարդը:

Սակայն հիվանդը խաբկանքի մեջ է, նրա
ջանքերն իզուր են անցնում և սպասված ա-
րագ ապաքինումը ուշանում է և ուշանում: Ա-
վելին, նրա վիճակն ավելի է վատթարանում,
սրտխառնուր և փսխուր, ստամոքսի ուժեղ ցա-
վեր, լուծ (ամենավատթար դրսևորումներով):
Երբեմն նաև ծարավ և դող:

Այս պարագայում շատ կարևոր է աղիքա-
յին վարակը տարբերել մման ախտանշաննե-
րով այլ հիվանդություններից՝ ոչ բակտերիալ
սննդային թունավորում (օրինակ՝ դեղորայքով),
կույր աղիքի սուր բորբոքում, սրտամկանի ին-
ֆարկտ, թոքաբորբ և այլն:

Ահա այս պատճառով վերը նշված նշան-
ները երևալուն պես չպետք է հապաղել. անմի-
ջապես դիմել բժշկի: Իսկ երբ վիճակը սրըն-
թաց վատթարանում է՝ պետք է «շտապագնուր-
յուն» կանչել: Այլ խոսքով՝ կյանքը վտանգել չի
կարելի:

Սուր աղիքային վարակիչ հիվանդություննե-
րից ապահովված լինելու համար (մանա-
վանդ ամռանը) ընդամենը պետք է պահպանել
ոչ բարդ և շատ սովորական կանոններ. կաթը
և ջուրը խմել եռացնելուց հետո, բանջարեղենը
և մրգերը ուտել միայն լավ, հոսող ջրի տակ
լվանալուց հետո, հին, ժամանակն անցած
սննդամթերքը չուտել, ուտելուց առաջ անպայ-
ման լվանալ ձեռքերը:

Այսինքն կանոններ, որ վայրենությունից
դուրս եկած մարդը կիրառում է հազարավոր
տարիներ: Իսկ եթե կան դեռ վայրենիներ՝ մեղքն
իրենց վիճը:

Աղիքային վարակիչ հիվանդությունները
վտանգավոր են նաև նրանով, որ փսխուրների
կամ լուծի ժամանակ տեղի է ունենում օրգա-
նիզմի ջրազրկում: Որի հետևանքը կարող են
լինել երկկամային անբավարարությունը, նյար-
դային ծանր ախտահարումները, սրտանոթա-
յին լուրջ խանգարումները: Այնպես որ՝ պահ-
պանեցեք հիգիենայի կանոնները:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԼՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Լողացեք ոսկու մեջ

Սույն արտահայտությունը
ընկալեք ուղղակի իմաստով:
Նման հաճելի հնարավորու-
յուն ունեն Տոկիոյի զբոսաշր-
ջիկները և հենց իրենք՝ ճապո-
նացիները:

Ճապոնիայի խոշորագույն
հյուրանոցները կահավորող
ֆիրման «Էլիտար» հյուրանոց-
ների տերերին առաջարկել է
ծեղ բերել ոսկյա լողարաններ,
որպեսզի հաճախորդները
ըմբռնվեն այն զգացողությու-
նը, թե ինչ է նշանակում լողանք
ընդունել ոսկու մեջ:

Ոսկյա շքեղ լողարանների
հետ առաջարկվում է նաև ոսկյա
բազ (իսկական ոսկուց): Թե ինչ
կարծեմա՝ նման պերճանքը
դժվար է հաշվել, սակայն, ինչ-
պես ատում են, շքեղ ապրելը լավ
բան է: Եվ մեկ էլ ասում են, թե
«Եթե բոշի յուղը շատ է լինում...»



Գիտություն

Գլխավոր խմբագիր ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈՒՐԱՂՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24դ,

հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 7.06.2007թ.

"ГИТЯТЮН" ("Hayka") gazeta HAH PA